ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«13» 11 2025 թ.
N 735

Հասցե ՀՀ, ք Վանաձոր, Նժդեհի 2/42
Հեռ. (+374322) 2-02-86
էլ. փոստ vanmedicalcenter@mail.ru, կայք www.vanmc.am

«ԱՐՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին/

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ԱՐՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲ ընկերության միջև 2025թ օգոստոսի 05-ին կնքված N ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/61-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրի /այսուհետ՝ Պայմանագիր/ համաձայն՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից տրվել է պատվեր 41 չափաբաժնի համար՝ *զոլեդրոնաթթու (զոլեդրոնաթթվի մոնոհիդրատ) դեղափոշի լիոֆիլացված կաթիլաներարկման լուծույթի 4մգ, ապակե սրվակ 5մլ և ապակե սրվակ 5մլ լուծչով*, սակայն «ԱՐՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲ ընկերության կողմից ապրանքը չի մատակարարվել: «ԱՐՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲ ընկերությանը 05.11.2025թ. N 712 գրությամբ առաջարկվել է 5 /հինգ/ օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պատվիրված և դեռևս չմատակարարված ապրանքի ողջ քանակը, որը կրկին չի մատակարարվել:

Հաշվի առնելով, որ ««ԱՐՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲ ընկերությունը էականորեն խախտել է պայմանագիրը՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 /հինգ/ օրից ավելի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը 41 չափաբաժնի մասով:

Տեղեկացնում ենք նաև, որ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 1150004484110100 հաշվեհամարին ենթակա է գանձման 78408 (յոթանասունութ հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 117612 (մեկ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր տասներկու) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

Սույն ծանուցումը 13.11.2025 թվականին կհրապարակվի gnumer.am կայքով:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության
տնօրեն՝ *Մ. Հազրոյան*